ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1700-ամյակի ուխտագնացությունների միջթեմական ներկայացուցչական մարմնի

(անդրանիկ նիստ, Երևան, 19–21 փետրվար 1997 թ.)

Փետրվարի 19–21-ին Երևանում, Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդարանում, տեղի ունեցավ Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի կապակցությամբ ուխտագնացությունների հանձնախմբի և թեմական ենթահանձնախմբի ներկայացուցիչների խորհրդաժողով՝ նախագահությամբ 1700-ամյակի միջոցառումների գործադիր վարիչ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի, ուխտագնացությունների ատենապետ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, մասնակցությամբ Կիլիկիո Աթոռի ներկայացուցչի և արտասահմանյան (ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրալական, Թեհրան, Սպահան, Ռումինիա, Սիրիա, Ուկրաինա, Վրաստան) ու Հայաստանի բոլոր ութ թեմերի լիազոր ներկայացուցիչների:

Ժողովի անդրանիկ նիստը բացեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, որը բեղմնավոր աշխատանք մաղթեց ներկաներին և ուխտագնացությունների վերաբերյալ իր նկատառումները հայտնեց: Այնուհետև նախատեսվող միջոցառումների մասին ընդհանուր հաղորդում կատարեց Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Ծավալուն և հանգամանալից էր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի ելույթը, որը ներկայացրեց ժողովի օրակարգը, ուխտագնացությունների ընդհանուր հայտագիրը, զեկուցեց կատարված նախապատրաստական աշխատանքների և կազմված ծրագրերի մասին, միաժամանակ ներկաների ուշադրությանը հանձնեց ուխտագնացություններին նվիրված տեղեկատու գրքույկի տեքստը:

Նույն նիստի ընթացքում եղան զեկուցումներ՝ Միջին Արևելքի ուխտագնացությունների (Սեպուհ Ծ. վրդ. Սարգիսյան), ճամփորդական ընդհանուր հարցերի (Լևոն Պաղտասարյան), 1997 թ. օգոստոսին Ռումինիա (Զարեհ Ծ. վրդ. Պարոնյան), Ղրիմ (Նաթան Ծ. վրդ. Հովհաննիսյան), Հայաստանի Կոտայքի (Առաքել վրդ. Քարամյան), Արմավիրի (Խորեն քհն. Մարուքյան), Արարատյան (Օնիկ Սարգսյան) թեմեր կատարելիք ուխտագնացությունների մասին: Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որի ընթացքում քննարկվեցին ուխտագնացությունների կազմակերպման բազմապիսի հարցեր, առաջարկություններ:

Խորհրդաժողովի երկրորդ օրվա աշխատանքներին իր մասնակցությունը բերեց ՀՀ տուրիզմի և առևտրի նախարար Գառնիկ Նանագուլյանը, որը ծանոթացրեց Հայաստանում տուրիզմի զարգացման հեռանկարներին՝ այն առնչելով 1700-ամյակի ուխտագնացություններին:

Հրավիրված էր նաև «Մոմջյան» հաստատության տնօրեն Ռոմեն Կոզմոյանը՝ ուխտավորների ընդունման կազմակերպչական հարցերի շուրջ խորհրդակցության համար:

Ժողովում հաղորդում տրվեց ուխտագնացությունների հետ առնչվող առաջիկա հրատարակությունների մասին, որոնք ներառում են երեք մակարդակի հրատարակություններ. հանրագիտարանային՝ Հայկական Հանրագիտարանի կողմից «Ուղեցույց ուխտավորների և զբոսաշրջիկների համար», ուղեցուցային՝ Հայկ Խաչատրյան՝ «Հայաստանի ուխտավայրերը» (քարտեզներով), և հանրամատչելի բնույթի գրքեր: Երևանյան այս հրատարակություններից բացի երեք հրատարակություններ են կատարվելու նաև Անթիլիասում՝ «Ուխտն ու ուխտագնացությունը Հայ Եկեղեցւոյ մէջ», տարեկան ուղեցույց ծրագիր և «Ուխտաւորի աղօթագիրք»:

Քննարկվեցին նաև հարցեր՝ կապված ուխտավորների խորհրդանշական անցագրերի, ծառատունկի, «ուխտի պատի» վերաբերյալ և այլն:

Խորհրդաժողովի երրորդ օրը քննարկվեց ուխտագնացությունների կազմակերպմամբ զբաղվող համահայկական «Մշո Սուրբ Կարապետի ընկերակցության» հիմնադրման հարցը, լավեցին միջազգային հաղորդակցական կապի ապահովման հետ կապված մի շարք այլ գործնական հարցեր:

Ամփոփելով խորհրդաժողովի եռօրյա աշխատանքի արդյունքները, ներկաներն արձանագրեցին, որ ձեռք են բերվել հիմնական սկզբունքային համաձայնությունները և ուղենշումները ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ առաջիկա տարիներին՝ մինչև 2001 թ. կազմակերպվելիք ուխտագնացությունների վերաբերյալ: Այժմ ժամանակն է գործնական աշխատանքների իրականացման, ուր բազմապիսի անելիքներ ունեն և՛ ուխտագնացությունների կենտրոնական հանձնախումբը, և՛ տեղական թեմական հանձնախմբերը: Ավելացնենք, որ իր տեսակի մեջ եզակի այս համազգային միջոցառումը, որը բազմադարյան սրբազան ավանդության մերօրյա հառնումն է, հաջողությամբ կպսակվի, եթե նրան իրենց միակամ, պատվախնդիր ու կազմակերպված մասնակցությունը բերեն մեր բոլոր հայրենակիցները ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

ԴԻՎԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

Ս. Էջմիածին